Տրամադրվող վարկի մեծություն

Տրամադրվող վարկի մեծության որև է սահմանափակում բանկի կողմից չի կիրառվում, այն պայմանավորված և կապակցված է.

- Վարկի նպատակից,
- Հաճախորդի վարկունակությունից,
- Հաճախորդի կողմից առաջարկվող վարկի ապահովվածությունից,
- Վարկային ռիսկի գնահատումից,
- ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից սահմանված նորմատիվային դաշտի պահանջներից:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ հաճախորդին կարող է մատուցել ծառայություններ Բանկի ընդհանուր քաղաքականությամբ սահմանված պայմաններից տարբերվող պայմաններով՝ հաշվի առնելով ստորև ներկայացված ցանկի պայմաններից որևէ մեկը.

- Հաճախորդի հաշվի մնացորդը,
- Հաճախորդի հաշվի շարժը,
- Բանկի համար հաճախորդի ռազմավարական նշանակությունը,
- Հաճախորդ կազմակերպության աշխատակիցների քանակը,
- Հաճախորդ կազմակերպությանը տրամադրված քարտերի ընդհանուր քանակը,
- Բանկին բերված եկամուտը,
- Փոխանցումների ծավալը,
- Բանկում ներդրված ավանդների մեծությունը,
- Խոշոր վարկառու հանդիսանալը,
- Սոցիալական նկատառումները (ուսումնական հաստատություններ բժշկական կազմակերպություններ և այլն),
- Վերոնշյալ կազմակերպությունների ղեկավար հանդիսանալ,
- Այլ օբյեկտիվ պայմաններ:

Ուշադրություն.
Ձեր պարտավորությունները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու դեպքում ձեր պարտքի վերաբերյալ տեղեկությունները կուղարկվեն վարկային ռեգիստր և վարկային բյուրո (աքռա):

Ուշադրություն.
Վատ վարկային պատմություն ունենալը ձեր համար հետագայում կարող է խոչընդոտ հանդիսանալ այլ վարկեր ստանալիս:

Ուշադրություն.
Ձեր կողմից գրավադրված գույքը (տունը, մեքենան կամ այլ) կարող է օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, եթե դուք ժամանակին չկատարեք ձեր վարկային պարտավորությունները: